այսպիսի յիշատակարան. «յաւուրս մեծի հայրապետի Զուղայեցի տեառն Յակոբի թիւն Հայոց ըստ տումարի ՌՃԶ. ամի ի յիշատակ Ստեփաննոս Իլովացի վարդապետի նոր պահարան Աջոյ ձեռին սուրբ Գրիգորին Լուսաւորչի կազմեալ եղև Էջմիածնի առ ի պարծանս Հայկայ զարմի.» Պահարանի ձևն է մի բազուկ արմնկից մինչև մատների ծայրը. այնտեղ, որտեղ որ թաթը միանում է բազուկին, Ս. Լուսաւորչի Աջը զարդարուած է կրկին ապարանջաններով, որոնցից մէկը ոսկի է թանգագին ակներով զարդարուած. վերջինս շինուած է 1770 թուին իբրև յիշատակ Թիֆլիսեցի Մարիամ տիկնոջ։ * Այդ պահարանի մէջ ամփոփուած Ս. Աջը պահւում է այժմ Ս Էջմիածնի տաճարին կից՝ Գէորգ Դ. կաթուղիկոսի 1869 թուին շինած՝ մասանց խորանում, որն ապահովութեան համար փակւում է երեք բանալիներով։ Այնտեղ Ս. Աջի հետ միասին պահւում են Հայոց եկեղեցու հին նուիրական սրբութիւնները՝ Ս. Գեղարդը, Կենաց փայտը, Փրկչի Մարդեղութեան Ս. պատկերը, առաքելական և հայրապետական Ս. Նշխարները, Ս. Հռիփսիմէի գագաթը, և այլ բազմաթիւ Ս. Նշաններ, աջեր, խաչեր, աւետարաններ, եկեղեցական թանգագին սպասք և անօթներ, զգեստներ և պատկերներ։ Ուխտաւոր-

---

** Շահխ. Ա. 68։